

**ԽԱՂՈՂԻ ՅՐՏԱԳԻՄԱՅԿՈՒՆ ՍՈՐՏԵՐԻ ԵՎ ԷԼԻՏԱՅԻՆ  
ՍԵՐՄՆԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՃԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՅՏԱՑՄԱՆ  
ԲՆՈՒՅԹԸ ՀԱՐԱՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Հարավի կոնտինենտալ հողակլիմայական պայմաններում խաղողի տնկարքները ձմռան ցրտերից պահպանելու համար, աշնանը ծածկում են հողի շերտով: Այդ կապված է մեծ թվով բանվորական ուժի և նյութական միջոցների ծախսման հետ: Բացի այդ, թաղման և բացման ժամանակ տեղի են ունենում բողբոջների մեխանիկական վնասվածքներ, որի հետևանքով էլ բերքի զգալի կորուստ: Այդ նպատակով սելեկցիայի առջև խնդիր է դրված ստեղծել ցրտադիմացկուն սորտեր, որոնց վազերը ձմռանը չծածկվեն: Այս կարևոր հարցի լուծումը առավել չափով կապված է սելեկցիոն աշխատանքների ճիշտ և նպատակադիր կազմակերպման հետ:

Սելեկցիայի պատմությունից հայտնի է, որ կուլտուրական խաղողի տեղական և եվրոպական սորտերը, որպես ելանյութ՝ ցրտադիմացկուն սորտ ստանալու համար՝ դեռևս իրենց չեն արդարացրել:

Գրական տվյալների համաձայն (Ի. Վ. Միչուրին, 1948 թ., Ա. Մ. Նեգրուլ, 1952 թ., Ս. Հ. Պողոսյան 1955 թ., Պ. Կ. Արվադյան և Ե. Ն. Դոկուչանա 1960, Ա. Ի. Պոտապենկո, 1962, Կ. Ա. Ֆելդբերգ, 1962 թ.), հիբրիդային սերնդում ցրտադիմացկունությունը և բարձր որակական ցուցանիշները ավելի հաջող են ժառանգվում, երբ տրամախաչման համար որպես ծնողական ձևեր օգտագործվում են եվրոպական կուլտուրական և ամուրական վալրի խաղողը: Ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ծնողական ձևերի վարքագիծը հարավի պայմաններում, առանձնապես վալրի ամուրական խաղողինը՝ նրա մաքուր վիճակում և v. vinifera-ի սորտերի հետ տրամախաչման դեպքում, նպատակ ունենալով բացահայտել առանձին հատկությունների և հատկանիշների ժառանգման բնույթը հիբրիդային սերնդում:

Այս ուղղությամբ մեր հետազոտությունները տարվել են Հայկական ՍՍՌ-ի Այգեգիներգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտում, խաղողի սելեկցիայի բաժնի կողմից ստացված հիբրիդային սերմնաբույսերի վրա, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր՝ Ս. Հ. Պողոսյանի ղեկավարությամբ:

Ուսումնասիրությունների համար ընտրել ենք տարբեր ծագում ունեցող հիբրիդային սերմնաբույսեր, ստացված մի զեպքում տեղական սորտերը ամուրական խաղողի և նրա հիբրիդային ձևերի հետ տրամաչափումից, մյուս զեպքում՝ ամուրական ու ամերիկյան խաղողը և նրանց հիբրիդային ձևերը եվրոպական սորտերի հետ տրամախաչումից:

Փորձի տակ եղած բույսերը աճեցվում են ինստիտուտի Փարաքարի էքսպերիմենտալ բաղալում՝ առապարների հողային պլաններում, առանց ձմեռը ծածկելու:

Տվյալ աշխատության մեջ բերվում են տարբեր ծագում ունեցող ցրտադիմացկուն հիբրիդային բույսերի աճեցողության և փայտացման վերաբերյալ ստացված արդյունքները:

Հայտնի է, որ միամյա շվերի աճը, փայտացման սկիզբը, ինչպես նաև ալդ պրոցեսների ընթացքի ինտենսիվությունը հատկանշական են պահեստային նյութերի կուտակման համար, որը իր հերթին կարևոր գործն է ցրտադիմացկունության բարձրացման խնդրում:

Ուսումնասիրությունների համար, յուրաքանչյուր խմբից ընտրել ենք ծնողական ձևերին և սերնդի համար բնորոշ աճեցողություն և հզորություն ունեցող վազեր: Միամյա շվերի տարեկան աճը որոշելու համար, չափումները կատարել ենք պարբերաբար, 5—10 օրը մեկ անգամ, սկսած մայիս ամսից մինչև սեպտեմբերի 15-ը:

Փորձի տակ եղած սերմնաբույսերը, ըստ աճեցողության, խմբավորվում են ուժեղ, միջակ և թույլ աճ ունեցողների:

Թույլ աճեցողություն ունեին մաքուր ամուրական խաղողը, (որի միամյա շվերի միջին երկարությունը կազմում էր 15—20 սմ) և հյուսիսի պալմաններում ամուրական ու եվրոպական խաղողի տրամաչափումից ստացված հիբրիդային ձևերը. մինչևեռ հայտնի է, որ ամուրական խաղողը Հեռավոր Արևելքում ունի հզոր աճ (Ի. Վ. Միչուրին, 1948 թ., Ա. Ի. Պոտապենկո 1962 թ., Կ. Ա. Ֆելդբերգ, 1962 թ.):

Ամուրական խաղողը եվրոպական սորտերի հետ կրկնակի տրամախաչումից ստացված սերմնաբույսերն ունեին ավելի ուժեղ

անկցողութիւն, ինչպէս, օրինակ, 1508/12 Հադիսի  $\times F_1$  «Ամուրեն-  
դիս  $\times 2$  յորնի սլաղիւ», 1056/7 Սև Այգենի  $\times$  Ամուրենդիս էլիտային  
սերմնաբույսերի վեգետատիվ սերունդը: Սրանց միամյա շվերի  
առարկան աճը երկու մետրից ավելի էր (ազ. 1):

Ա զ յ ու ս ա կ 1

Յրտադիմացիուն սօրտերի և սերմնաբույսերի աճման դիմամիկան,  
կապված նրանց ծագման հետ,

| Սօրտը կամ հիբ-<br>րիդային կոմբի-<br>նացիան                                                            | Ելետային<br>նաբույսի<br>համալը | Միամյա<br>շվերի<br>աճման |       | Անկցողութիւնն ըստ<br>ամիսների |       |        |        |         |                 | Ելետի<br>ընդհանուր<br>երկարութիւնը |
|-------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------|--------------------------|-------|-------------------------------|-------|--------|--------|---------|-----------------|------------------------------------|
|                                                                                                       |                                | սկիզբը                   | վերջը | մինչև<br>մայիս                | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբ-<br>բեր |                                    |
| 1                                                                                                     | 2                              | 3                        | 4     | 5                             | 6     | 7      | 8      | 9       | 10              | 11                                 |
| Տեղում ուտացված<br>ամուրա-եփրոպա-<br>կան և Ամերիկյան-<br>եփրոպական հիբ-<br>րիդային սերմնա-<br>բույսեր |                                |                          |       |                               |       |        |        |         |                 |                                    |
| Հադիսի $\times F_1$ «Ամու-<br>րենդիս $\times 2$ յորնի<br>Սլաղիւ»                                      | 1508/12                        | 5/4                      | 15/8  | 16                            | 40,1  | 50,6   | 22,7   | 6,0     | —               | 204,4                              |
| Սև Այգենի $\times$ Ամու-<br>րենդիս                                                                    | 1056/7                         | 5/4                      | 20/9  | 19,7                          | 94,4  | 39,8   | 30,0   | 26,9    | 0,9             | 211,7                              |
| Հադիսի $\times$ Կարենեն                                                                               | 1509/58                        | 11/4                     | 28/8  | 27,2                          | 65,6  | 43,5   | 16,9   | 2,1     | —               | 155,4                              |
| Հադիսի $\times$ Կարենեն                                                                               | 1509/66                        | 9/4                      | 7/8   | 23,1                          | 58,6  | 49,4   | 5,6    | 0,9     | —               | 137,9                              |
| Սեյաննից Մալինդրա<br>65/18 $\times$ Տաեժնի<br>Իզումբուզ                                               | 1503/16                        | 9/4                      | 7/8   | 16,8                          | 71,5  | 33,7   | 2,3    | 0,7     | —               | 125,0                              |
| Սեյաննից Մալինդրա<br>65/18 $\times$ Տաեժնի<br>Իզումբուզ                                               | 1503/17                        | 11/4                     | 26/6  | 19,2                          | 70,8  | 28,6   | —      | —       | —               | 118,6                              |
| Սեյաննից Մալինդրա<br>65/18 $\times$ Տաեժնի<br>Իզումբուզ                                               | 1503/19                        | 5/4                      | 7/7   | 19,8                          | 60,7  | 31,5   | 3,0    | 1,5     | —               | 116,5                              |
| Մանուշակազույն<br>Մուսկատի $\times M$ 25                                                              | 1279/7                         | 5/4                      | 25/8  | 14,6                          | 77,4  | 40,2   | 14,9   | 3,8     | —               | 150,0                              |
| Սպիտակ Արաքսե-<br>նի $\times 2$ յորնի Սլաղ-<br>ի                                                      | 979/2                          | 12/4                     | 5/9   | 18,3                          | 56,7  | 19,2   | 18,6   | 4,6     | 0,4             | 116,8                              |

| 1                                                                                | 2       | 3    | 4    | 5    | 6    | 7    | 8    | 9   | 10  | 11    |
|----------------------------------------------------------------------------------|---------|------|------|------|------|------|------|-----|-----|-------|
| Սպիտակ Արաբսե-<br>նի X յորնի Սլադ-<br>կի                                         | 979/5   | 12/4 | 29/9 | 24,6 | 84,8 | 51,8 | 25,8 | 9,6 | 0,7 | 198,3 |
| Սեյանեց Մալինգրա<br>65/18 X Տանժնի<br>Իզուսրուզ                                  | 1503/21 | 8/4  | 19/6 | 14,7 | 41,1 | 3,1  | —    | —   | —   | 60,9  |
| Սե Այգենի X Ամու-<br>րենդիս                                                      | 1056/3  | 5/4  | 8/8  | 15,1 | 41,0 | 6,9  | 2,4  | 0,4 | —   | 65,8  |
| Հյուսիսից բերված<br>սորաբեր և սերմնա-<br>բույսեր                                 |         |      |      |      |      |      |      |     |     |       |
| F <sub>1</sub> Մաղլեն Անժե-<br>վին X Ամուրեն-<br>դիս X Սեյանեց<br>Մալինգրա 65/16 | 1563/1  | 2/4  | 7/8  | 21,6 | 64,7 | 15,0 | 1,7  | 1,0 | —   | 104,0 |
| F <sub>1</sub> Մաղլեն Անժե-<br>վին X Ամուրեն-<br>դիս X Սեյանեց<br>Մալինգրա 65/16 | 1563/21 | 28/3 | 9/7  | 35,6 | 81,0 | 21,4 | 1,3  | —   | —   | 139,3 |
| F <sub>1</sub> Մաղլեն Անժե-<br>վին X Ամուրեն-<br>դիս X Սեյանեց<br>Մալինգրա 65/16 | 1563/22 | 3/4  | 7/8  | 14,4 | 72,2 | 54,4 | 13,7 | 1,0 | —   | 155,7 |
| F <sub>1</sub> Մաղլեն Անժե-<br>վին X Ամուրեն-<br>դիս X Սեյանեց<br>Մալինգրա 65/16 | 1563/3  | 29/3 | 26/6 | 8,8  | 28,8 | 11,7 | —    | —   | —   | 49,3  |
| F <sub>1</sub> Մաղլեն Անժե-<br>վին X Ամուրեն-<br>դիս X Սեյանեց<br>Մալինգրա 65/16 | 1563/7  | 5/4  | 26/6 | 8,3  | 22,3 | 13,0 | —    | —   | —   | 43,6  |
| Սեյանեց Սափերա-<br>վի (Սեյանեց X Սա-<br>փերավի)                                  |         | 8/4  | 8/8  | 11,5 | 30,8 | 5,5  | 1,2  | 0,3 | —   | 49,3  |
| Յանվարսկի Բելի<br>(Ամուրսկի X Մուս-<br>կաթ Ալեքսանդր-<br>յան)                    |         | 5/4  | 8/8  | 16,3 | 43,1 | 42,6 | 4,5  | 0,4 | —   | 76,9  |
| Ամուրենդիս X Չյոր-<br>նի Սլադկի                                                  | 237     | 29/3 | 9/8  | 18,2 | 32,1 | 6,6  | 0,6  | 0,2 | —   | 57,7  |
| Դանիկոստոյնի Տի-<br>խոնովա X ԱԴՄ-<br>10                                          | C-564   | 6/4  | 23/8 | 12,9 | 28,0 | 9,1  | 10,0 | 1,4 | —   | 61,4  |
| Ռուսկի Կոնկորդ<br>(Կոնկորդ X Ամու-<br>րենդիս)                                    |         | 7/4  | 24/8 | 21,2 | 71,8 | 21,8 | 11,2 | 6,5 | —   | 132,5 |

Աղյուսակի տվյալներից միաժամանակ երևում է, որ հյուսիսում ձևավորված ամուրա-եվրոպական խմբի հիբրիդային սերմնաբույսերի մոտ աճը սկսվել է համեմատաբար ավելի վաղ (28/III—5/IV) և հիմնականում դադարել է հունիսի վերջին, հուլիսի սկզբներին:

Հարավի պայմաններում ամուրական×եվրոպական ու ամերիկական×եվրոպական հիբրիդային ձևերի մոտ աճը սկսվել է հիմնականում ավելի ուշ՝ ապրիլի առաջին տասնօրյակից և դադարել է օգոստոսի սկզբին: Տեղական հինավուրց սորտերի մասնակցության դեպքում, ինչպես, օրինակ, Սպիտակ Արաքսնի×Զլորնի Սլադկի կոմբինացիայի սերմնաբույսերի մոտ, աճը սկսվել է փորձարկվող մյուս սերմնաբույսերից ավելի ուշ: Չնայած դրան, սերմնաբույսերի մոտ բուսն աճը նկատվում էր մալիս ամսում, (որը կազմում է տարեկան աճի 50—60%-ը) և համընկնում մասսայական ծաղկման ժամանակաշրջանին: Հետագա ամիսներին աճը աստիճանաբար դանդաղում էր ջերմաստիճանի բարձրացման, օդի հարաբերական խոնավության պակասեցման, ինչպես նաև սննդանյութերի մեծ մասը ալգ ժամանակում պտղակալման, պտուղների հասունացման, հասունացող մատերում պաշարային նյութերի կուտակման վրա ծախսելու հետևանքով:

Բարձր ջերմաստիճանը՝ 35—41°C թուլացնում է բույսի աճեցողության ինտենսիվությունը: Նման ջերմաստիճանը Արարատյան դաշտավայրի պայմաններում լինում է հուլիս—օգոստոս ամիսներին, որի հետևանքով վաղերի աճը համարյա դադարում է:

Մեր փորձերում հյուսիսից բերված ամուրական×եվրոպական ծառում ունեցող սերմնաբույսերի մոտ աճեցողության պրոցեսներն ընթանում էին ավելի քիչ էֆեկտիվ ջերմաստիճանի առկայությամբ (1200—2200°), իսկ ամերիկյան խաղողի հետ տրամախաչումից ստացված սորտերի և հիբրիդների մոտ համեմատաբար ավելի բարձր ջերմության քանակի առկայությամբ (2200°—3200°C):

Տեղական և ամուրական խաղողի տրամախաչումից ստացված որոշ սերմնաբույսերի մոտ աճեցողության համար պահանջվում էր էֆեկտիվ ջերմության ավելի մեծ գումար՝ 3200°C և ավելի:

Վաղի ցրտադիմացկունությունը մեծ չափով կապված է միամյա շվերի հասունացման աստիճանի հետ:

Միամյա շվերի համեմատաբար լավ փալտացում՝ 70,0—82% ունեին տեղական և ամուրական ու ամուրա-եվրոպական ծագում ունեցող որոշ էլիտային սերմնաբույսեր:

Միջակ փալտացում՝ 50,0—69,0% ունեին հյուսիսի պայման-

ներում ստացված հիբրիդները, որոնք դեռևս հարավի հողակլիմայական պայմաններին չեն ընտելացել, չնայած իրենց առաջացման վայրում հայտնի են որպես բարձր ցրտադիմացկուն ձևեր:

Ամենաթույլ փայտացումն ունին Հեռավոր Արևելքից բերված վայրի ամուրական խաղողը և ամենից ձևավորված Ցաեժնի Իգումբուշ սորտի հետ հարավում խաչաձևումներից ստացված հիբրիդային սերմնաբույսերը:

Ուսումնասիրված սորտերի և սերմնաբույսերի որոշ մասի մոտ փայտացման սկիզբը համընկնում էր պտղի հասունացման սկզբի հետ, որոշ մասի մոտ՝ հատկապես ամերիկյան ծագում ունեցողների մոտ՝ 10—15 օր ավելի շուտ էր սկսել, որոշների մոտ էլ՝ 15—20 օր ուշ (աղ. № 2):

Աղյուսակ 2

Ցրտադիմացկուն սորտերի և հիբրիդային սերմնաբույսերի միամյա շվերի փայտացման դինամիկան կապված նրանց ծագման հետ

| Սորտը կամ հիբրիդային կոմբինացիան                  | Երկրորդ տարվա սերմնաբույսի փայտացման սկիզբը | Փայտացում |       | Փայտացումն ըստ ամիսների 0/0-ներով |        |        |         |           |           | Փայտացման ամիսը | Փայտացման ամիսը |
|---------------------------------------------------|---------------------------------------------|-----------|-------|-----------------------------------|--------|--------|---------|-----------|-----------|-----------------|-----------------|
|                                                   |                                             | մարտ      | ապրիլ | մայիս                             | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր |                 |                 |
| I                                                 | 2                                           | 3         | 4     | 5                                 | 6      | 7      | 8       | 9         | 10        | 11              | 12              |
| Ցեղում ստացված հիբրիդային սերմնաբույսեր           |                                             |           |       |                                   |        |        |         |           |           |                 |                 |
| Հադիսի X Կարերնե                                  | 1509/53                                     | 23/7      | 10/9  | 3,7                               | 65,6   | 77,5   | 79,0    | 79,1      | 79,1      | 86,6            |                 |
| » »                                               | 1509/66                                     | 10/7      | 10/11 | 41,5                              | 67,6   | 71,5   | 72,8    | 73,1      | 73,1      | 68,1            |                 |
| Հադիսի X F <sub>2</sub> Ամուրենդիս X Զյորնի Սյադի | 1508/12                                     | 12/7      | 4/11  | 20,8                              | 71,2   | 77,3   | 78,0    | —         | 78,0      | 77,4            |                 |
| Սե Այդենի X Ամուրենդիս                            | 1036/7                                      | 5/8       | 3/11  | —                                 | 35,2   | 58,0   | 73,1    | 76,3      | 76,3      | 71,4            |                 |
| Մանուշակագույն Մուսկատ X № 25                     | 1279/7                                      | 15/7      | 3/11  | 2,0                               | 46,6   | 65,5   | 79,2    | 79,3      | 79,3      | —               |                 |
| Սեյանեց Մալենգրա 65/18 X Ցաեժնի Իգումբուշ         | 1503/16                                     | 14/7      | 17/10 | 16,1                              | 69,8   | 73,8   | 74,1    | —         | 74,1      | 59,1            |                 |
| Սեյանեց Մալենգրա 65/18 X Ցաեժնի Իգումբուշ         | 1503/21                                     | 27/6      | 10/9  | 61,7                              | 73,4   | 74,8   | —       | —         | 74,8      | 73,7            |                 |

| 1                                                                                         | 2       | 3    | 4     | 5    | 6    | 7    | 8    | 9    | 10   | 11   |
|-------------------------------------------------------------------------------------------|---------|------|-------|------|------|------|------|------|------|------|
| Մարտի Արարե-<br>նի X 2-րդի Սլադ-<br>կի                                                    | 979/2   | 23/7 | 10/11 | 5,5  | 35,0 | 46,3 | 51,6 | 52,0 | 52,0 | —    |
| Մարտի Արարե-<br>նի X 2-րդի Սլադ-<br>կի                                                    | 979/5   | 20/7 | 10/11 | 8,7  | 44,8 | 54,2 | 56,3 | 56,7 | 56,7 | —    |
| Սև Այգենի X Ամու-<br>րենդիս                                                               | 1056/3  | 25/7 | 3/11  | 7,8  | 31,3 | 45,0 | 50,2 | —    | 50,2 | —    |
| Սեյանեց Մալենդրա<br>65/18 X Տահմինի<br>Իզուսթուդ                                          | 1503/19 | 14/7 | 17/10 | 22,6 | 49,0 | 50,9 | 52,0 | —    | 52,0 | 80,9 |
| Սեյանեց Մալենդրա<br>65/18 X Տահմինի<br>Իզուսթուդ                                          | 1503/17 | 14/7 | 17/10 | 2,5  | 3,8  | 26,1 | 26,6 | —    | 26,6 | 42,8 |
| Հյուսիսում ստաց-<br>ված սորոսեր և<br>սերմնաբույսեր                                        |         |      |       |      |      |      |      |      |      |      |
| 161 F <sub>1</sub> «Մաղլեն<br>Անժեգին» X Ամու-<br>րենդիս X Սեյա-<br>նեց Մալենդրա<br>65/16 | 1563/1  | 17/7 | 17/10 | 27,8 | 64,7 | 80,2 | 82,0 | —    | 82,0 | 68,4 |
| 161 F <sub>1</sub> «Մաղլեն<br>Անժեգին» X Ամու-<br>րենդիս X Սեյա-<br>նեց Մալենդրա<br>65/16 | 1563/21 | 27/6 | 10/9  | 61,7 | 73,4 | 74,8 | —    | —    | 74,8 | 73,7 |
| 161 F <sub>1</sub> «Մաղլեն<br>Անժեգին» X Ամու-<br>րենդիս X Սեյա-<br>նեց Մալենդրա<br>65/16 | 1563/22 | 8/7  | 17/10 | 40,8 | 67,0 | 71,4 | 71,7 | —    | 71,7 | 77,3 |
| 161 F <sub>1</sub> «Մաղլեն<br>Անժեգին» X Ամու-<br>րենդիս X Սեյա-<br>նեց Մալենդրա<br>65/16 | 1563/3  | 10/7 | 10/9  | 41,1 | 57,8 | 60,8 | —    | —    | 60,8 | 71,4 |
| 161 F <sub>1</sub> «Մաղլեն<br>Անժեգին» X Ամու-<br>րենդիս X Սեյա-<br>նեց Մալենդրա<br>65/16 | 1563/7  | 10/7 | 17/10 | 23,6 | 52,5 | 56,2 | 58,9 | —    | 58,9 | 53,3 |
| Սեզերնի Սափերա-<br>վի (Սեզերնի X Սա-<br>փերավի)                                           |         | 22/7 | 17/11 | 24,1 | 47,1 | 52,1 | 57,8 | 61,0 | 61,0 | 60,6 |

| 1                                                           | 2     | 3    | 4     | 5    | 6    | 7    | 8    | 9    | 10   | 11   |
|-------------------------------------------------------------|-------|------|-------|------|------|------|------|------|------|------|
| Ռուսիի Կոնկորդ<br>(Կոնկորդ X Ամու-<br>րենգիս)               |       | 12/7 | 17/11 | 16,7 | 51,9 | 62,5 | 67,5 | 69,7 | 69,7 | 66,6 |
| Դալնեյոստոչնի<br>Տիխոնովա X ԱԴՄ<br>10                       | C—564 | 23/7 | 17/11 | 5,7  | 33,2 | 48,0 | 53,9 | 56,3 | 56,3 | 47,6 |
| Ամուրենգիս X Զյու-<br>նի Սլադկի                             | № 237 | 16/7 | 17/11 | 5,2  | 16,1 | 26,7 | 32,2 | 33,8 | 33,8 | 38,4 |
| Յանվարսկի Բելի<br>(Ամուրական X<br>Մուսկաթ Ալեք-<br>սանդրյան |       | 17/7 | 17/11 | 13,2 | 58,0 | 65,4 | 69,2 | 70,4 | 70,4 | 54,5 |

Վեգետացիայի վերջում՝ նոյեմբերի 2-րդ կեսին կատարվել են նաև հասունացած շվերի հաստության չափումները:

Մատի հիմքում և 7—9-րդ հանգույցներում լավ և միջակ հաստություն ունեին տեղական X ամուրական ծագում ունեցող հիբրիդային սերմնարույսերը, որոնք միաժամանակ աչքի էին ընկնում նաև ուժեղ աճեցողությամբ և լավ փայտացմամբ: Սրանք փայտացած մասում ունեին 24—25 աչք, որը կազմում էր ընդհանուր աչքերի 71,4—77,7%-ը:

Ավելի բարակ մատեր և քիչ աչքեր փայտացման մասում ունեն հյուսիսից բերված սորտերը և հիբրիդային ձևերը (38,4—60%):

Ըստ ագրոմետեորոլոգիական կայանի տվյալների, 1961—1962 թթ. ձմռանը օդի միջին ալ ջերմաստիճանը 4 ժամ տևողությամբ եղել է—23°C, հողի մակերեսին՝—28°C: Այս ցրտերից հետո ստուգվել է բաց ձմեռած բույսերի բողբոջների վնասվածության աստիճանը ըստ պետական սորտափորձարկման համար սահմանված մեթոդիկայի, հինգ բալանի սխեմանով (մինչև 20% վնասվածներ՝ 5 բալ, 20—40%՝ չորս, 40—50%՝ երեք բալ, իսկ 50%-ից ավելի վնասվածները երկու բալ (ադ. 3):

Զնայած հյուսիսում ստացված սորտերը և սերմնարույսերը ունեին թույլ աճեցողություն և փայտացում, այնուամենայնիվ, ցուցաբերեցին բարձր ցրտադիմացկունություն:

Այսպես, օրինակ, Միչուրինսկից ստացված Մադլեն Անժելին X Ամուրենգիս X Սելանեց Մալնգրայի սերմնարույս 65/16 կոմբինացիայի բաց ձմեռած բոլոր սերմնարույսերի մոտ բողբոջները —28°C տակ բոլորովին չէին վնասվել:

Բարձր ցրտադիմացկունություն ցույց տվեցին նաև տեղում ամուրսկան խաղողի ու տեղական սորտերի տրամախաչումից ստացված հիբրիդային սերմնաբույսերը՝ Սև Այգենի  $\times$  Ամուրենդիս և Հադիսի  $\times$  F<sub>1</sub> Ամուրենդիս  $\times$  Չյորնի Սլադկի, որոնք ունենին նաև լավ աճեցողություն և լավ փայտացում:

Վերը բերված տվյալները ցույց են տալիս, որ վալրի ամուրսկան խաղողը չնայած Արարատյան դաշտավայրի պայմաններում ունի շատ թույլ աճ և փայտացում, այնուամենայնիվ, պահպանում է իր բարձր ցրտադիմացկունությունը:

Ա ղ յ ու ս ա ի 3

Յրտադիմացկուն սորտերի և հիբրիդային սերմնաբույսերի բողբոջների վնասվածության աստիճանը բաց ձմեռելու պայմաններում

| Սորտը կամ հիբրիդային կոմբինացիան                                      | Ելիստային սերմ-<br>նաբույսի համարը | աճեցողությունը<br>սմ | Շվեբերի հաս-<br>տություններ<br>մմ-ով |                            | Փայտացման աս-<br>տիճանը | Բողբոջների գե-<br>մացվածությունը<br>(—28°C տակ (բա-<br>լերով) |
|-----------------------------------------------------------------------|------------------------------------|----------------------|--------------------------------------|----------------------------|-------------------------|---------------------------------------------------------------|
|                                                                       |                                    |                      | հիմքում                              | 7—9-րդ<br>հանգույ-<br>ցում |                         |                                                               |
| 1                                                                     | 2                                  | 3                    | 4                                    | 5                          | 6                       | 7                                                             |
| Տեղում ստացված հիբրիդային<br>սերմնաբույսեր                            |                                    |                      |                                      |                            |                         |                                                               |
| Հադիսի $\times$ F <sub>1</sub> «Ամուրենդիս $\times$<br>Չյորնի Սլադկի» | 1508/12                            | 204,4                | 10,5                                 | 7,5                        | 78,0                    | 5                                                             |
| Սև Այգենի $\times$ Ամուրենդիս                                         | 1056/7                             | 211,7                | 11,4                                 | 8,3                        | 76,3                    | 5                                                             |
| Հադիսի $\times$ Կարենի                                                | 1509/53                            | 155,4                | 9,7                                  | 6,2                        | 79,1                    | 5                                                             |
| » »                                                                   | 1509/66                            | 137,9                | 8,8                                  | 5,8                        | 73,1                    | 5                                                             |
| Սեյանեց Մալենդրա 65/18 $\times$ Տա-<br>հժնի Իզուվրուզ                 | 1503/16                            | 135,0                | 8,0                                  | 5,7                        | 71,4                    | 5                                                             |
| Սեյանեց Մալենդրա 65/18 $\times$ Տա-<br>հժնի Իզուվրուզ                 | 1503/17                            | 118,8                | 7,0                                  | 4,0                        | 26,6                    | 5                                                             |
| Սեյանեց Մալենդրա 65/18 $\times$ Տա-<br>հժնի Իզուվրուզ                 | 1503/19                            | 116,5                | 8,3                                  | 5,3                        | 52,0                    | 5                                                             |
| Սեյանեց Մալենդրա 65/18 $\times$ Տա-<br>հժնի Իզուվրուզ                 | 1503/21                            | 60,9                 | 8,3                                  | 5,0                        | 74,8                    | 5                                                             |
| Մանուշակազույն Մուսկաթ $\times$<br>№ 25                               | 1279/7                             | 150,9                | —                                    | —                          | 79,3                    | 5                                                             |
| Սպիտակ Արաքսենի $\times$ Չյորնի<br>Սլադկի                             | 979/2                              | 116,8                | —                                    | —                          | 52,0                    | 4                                                             |

| 1                                                                       | 2       | 3     | 4   | 5   | 6    | 7 |
|-------------------------------------------------------------------------|---------|-------|-----|-----|------|---|
| Սպիտակ Արաբսենի X Չյորնի Սլազկի                                         | 979/5   | 198,3 | —   | —   | 56,7 | 4 |
| Սև Այգենի X Ամուրենզիս                                                  | 1056/3  | 65,8  | —   | —   | 50,2 | 5 |
| Հյուսիսից բերված սորտեր և սերմնաբույսեր                                 |         |       |     |     |      |   |
| 161 F <sub>1</sub> Մազլեն Անժեզին X Ամուրենզիս X Սեյանեց Մալենզրա 65/16 | 1563/1  | 104,0 | 8,3 | 1,7 | 82,0 | 5 |
| 161 F <sub>1</sub> Մազլեն Անժեզին X Ամուրենզիս X Սեյանեց Մալենզրա 65/16 | 1563/21 | 139,3 | 8,3 | 5,0 | 74,8 | 5 |
| 161 F <sub>1</sub> Մազլեն Անժեզին X Ամուրենզիս X Սեյանեց Մալենզրա 65/16 | 1563/22 | 155,7 | 6,3 | 4,7 | 71,7 | 5 |
| 161 F <sub>1</sub> Մազլեն Անժեզին X Ամուրենզիս X Սեյանեց Մալենզրա 65/16 | 1563/3  | 49,3  | 4,7 | 2,7 | 60,8 | 5 |
| 161 F <sub>1</sub> Մազլեն Անժեզին X Ամուրենզիս X Սեյանեց Մալենզրա 65/16 | 1563/7  | 43,6  | 5,3 | 3,0 | 58,9 | 5 |
| Սեզերնի Սափերավի (Սեզերնի X Սափերավի)                                   |         | 49,3  | 5,3 | 3,9 | 60,8 | 5 |
| Յանվարսկի Ռեյի (Ամուրական X Մուսկաթ Ալեքսանդրյան)                       |         | 76,9  | 5,9 | 3,9 | 70,4 | 4 |
| Ամուրենզիս X Չյորնի Սլազկի                                              | № 237   | 57,7  | 5,3 | 2,9 | 35,8 | 5 |
| Պանեկոստուչնի Տիխոնովա X 1171—10                                        | Ս—564   | 61,4  | 6,5 | 3,9 | 56,3 | 5 |
| Ռուսկի Կոնկորդ (Կոնկորդ X Ամուրենզիս)                                   |         | 132,5 | 6,5 | 4,7 | 69,7 | 5 |

Ամուրական խաղողը և նրա հիբրիդային ձևերը տեղական և եվրոպական սորտերի հետ տրամախաչելու ղեկարւմ սերնդում սերմնաբույսերը համեմատաբար բարձր ցրտադիմացկունության հետ ունենում են նաև ուժեղ աճ ու փայտացում և մեծ մասամբ պտղի բարձր որակական ցուցանիշներ:

Հարավի կոնտինենտալ կլիմայի պայմաններում լավ չեն աճում հյուսիսում առաջացած և ձևավորված ամուրա X եվրոպական և ամերիկյան X եվրոպական ծագում ունեցող սորտերը և հիբրիդային ձևերը, սակայն պահպանում են իրենց բարձր ցրտադիմացկունությունը և՛ հանդիսանում են լավագույն ծնողական ձևեր: Այդ հիբրիդային ձևերը և տեղական սորտերի հետ տրամախաչումից ստացված ցրտադիմացկուն սերմնաբույսերն ունեն ավելի ուժեղ աճնցողություն և լավ փայտացում:

Р. П. АКОПЯН

## **ХАРАКТЕР РОСТА И ОДРЕВЕСНЕНИЯ МОРОЗОСТОЙКИХ СОРТОВ И ЭЛИТНЫХ СЕЯНЦЕВ ВИНОГРАДА В УСЛОВИЯХ ЮГА**

(резюме)

В работе приводятся результаты изучения характера роста и одревеснения однолетних побегов некоторых морозостойких сортов и элитных сеянцев винограда в условиях юга Армении в зависимости от их происхождения.

Исследования проводились на селекционном материале отдела селекции и ампелографии Института виноделия, виноградарства и плодководства МПиЗс-хП Армянской ССР, на Паракарской экспериментальной базе и в условиях каменистых карбонатных почв-киров.

Для изучения были выделены элитные сеянцы, полученные на юге Армении от скрещивания местных сортов с амурским виноградом и его гибридными формами с европейскими сортами, а также привезенные с севера сорта и гибриды амуро-европейского и американо-европейского происхождения. Подопытные растения выращивались в одинаковых условиях агротехники без укрытия на зиму.

Результаты изучения показали различный характер роста и вызревания однолетних побегов у морозостойких растений в зависимости от происхождения.

В условиях жаркого и сухого климата юга Армении растения дикого амурского винограда имели очень слабый рост (15—20 см) и плохое одревеснение (48,2%).

Полученные же на месте сеянцы от скрещивания амурского винограда и амуро-европейских гибридов с местными сортами имели сильный рост (до 212 см) и хорошее одревеснение однолетних побегов (до 82,0%).

Привезенные с севера морозостойкие сорта и сеянцы амуро-европейских и американо-европейских гибридов на юге в необычных для них условиях жизни чувствовали себя угнетенно, что выражалось в слабом и среднем росте, посредственном созревании однолетних побегов.

Изучение степени повреждения глазков открыто зимовавших растений после непродолжительных морозов ( $-23^{\circ}\text{C}$  в воздухе) показало, что амурский виноград хотя и на юге имеет слабый рост и плохое одревеснение однолетних побегов, но все же сохраняет свою высокую морозостойкость: все глазки хорошо выдержали указанную отрицательную температуру.

Морозостойкие элитные сеянцы, полученные на юге от скрещивания амурского винограда с местными, наряду с хорошим ростом и одревеснением, показали и высокую устойчивость глазков.

Привезенные с севера амуро-европейские и американо-европейские сорта и гибриды, несмотря на средний прирост и посредственное одревеснение, имели незначительную гибель глазков, сохраняя высокую морозостойкость. Они могут служить хорошим исходным материалом для повторных скрещиваний в условиях юга.